

<< Արմավիրի մարզի Նորապատի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ  
Նորապատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ  
թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Առաջատար մասնագետ ծածկագիր /3.1-1/

Աշխատակազմի առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է համայնքի բյուջեի նպատակային օգտագործումը:

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, վճարման փաստաթղթերի կազմումը և ներկայացումը, մասնակցում է ֆինանսատնտեսագիտական գործի կազմակերպմանը:

Քարտուղարի հանձնարարությամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան մարմիններ ներկայացնելու համար կազմում է ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, կազմում և ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

Առնվազը միջնակարգ կրթություն

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2016 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 12:00-ին, Նորապատի համայնքապետարանի շենքում:

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի §բ՝ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Դիմող << քաղաքացիները համայնքապետարանի աշխատակազմ կամ << Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):

- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակի հետ միասին:

- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում << կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

- արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը:

- մեկ լուսանկար 3×4 չափսի:

- անձնագրի պատճենը:

<< քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների կողմից ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից Նորապատի համայնքապետարանում /հեռ.2-36-10/, Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏՎ վարչություն /հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237 - 2- 76 -49, 0237-2-07-70/:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2016թ.-ի նոյեմբերի 1-ը: